Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության համալսարանի
ռեկտոր, ԳԽ Նախագահ

Լ. Խ. Մարիբեկյան

«31» 08 2016թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱ-ԲԺՇԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Գիտա-բժշկական ուսումնական կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) Համալսարանի կարևորագույն կառուցվածքային ստորաբաժանումներից մեկն է:

1.2. Կենտրոնն իր գործունեությամբ ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ, գիտական խորհրդի որոշումներով, ռեկտորի հրամաններով և սույն կանոնադրությամբ:

1.3. Կենտրոնի ղեկավարն իր գործունեությամբ հաշվետու է Համալսարանի ռեկտորին:

1.4. Սույն կանոնադրությունը հաստատվում և նրանում փոփոխություններ կատարվում են Համալսարանի գիտական խորհրդի կողմից:

2. ԿԵՆՏՐՈՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Նպատակները և խնդիրները.

- զարգացնել Համալսարանի ուսումնական գործունեությունը,
- ավանդական բժշկության բնագավառում իրականացնել գիտական հետազոտություններ,
- իրականացնել ուսումնական, մեթոդական և գիտահետազոտական աշխատանքներ ուսանողների և դասախոսների շրջանում,
- կազմակերպել բնակչության բուժսպասարկում և խորհրդատվություն,
- նպաստել Համալսարանի գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

3. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3.1. Կենտրոնի բազայի վրա Համալսարանի ուսանողների անկախ գիտական խմբերի ստեղծում՝ տարբեր գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:

3.2. Գիտախորհրդատվական օգնության տրամադրում ամբիոնների աշխատակիցներին և ուսանողներին՝ ինքնուրույն և Կենտրոնի հետ համատեղ գիտական հետազոտություններ անցկացնելու համար:

3.3.Ուսումնական պլանով նախատեսված հետազոտական փորձարարական դասերի կազմակերպում և անցկացում:

3.4. Սույն կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով չարգելվող այլ գործառույթներ:

4. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

4.1. Կենտրոնի կառուցվածքը

- Կենտրոնն իր կազմում ունի 10 մասնագիտացված, այդ թվում
  - բժշկական ընդհանուր պրակտիկայի
  - ռեֆլեքսոթերապիայի,
  - ֆիտոթերապիայի,
  - ասեղնաբուժության,
  - հոմեոպաթիայի
  - թերապևտիկ, օրթոպեդիկ, վիրաբուժական ստոմատոլոգիայի կաբինետներ,
  - ատամնատեխնիկական լաբորատորիա:
- Կենտրոնի ընդհանուր ղեկավարումը իրականացնում է Համալսարանի ռեկտորը:
- Համալսարանի ռեկտորին է վերապահվում կատարել կենտրոնի կառուցվածքային փոփոխություններ:
- Կենտրոնի գործունեությունը անմիջական ղեկավարում է ԳԲՈՒԿ-ի գլխավոր բժիշկը, որին աշխատանքի նշանակում կամ ազատում է Համալսարանի ռեկտորը:
- Կենտրոնի անձնակազմի հաստիքային պաշտոնների համալրումը կատարվում է գլխավոր բժիշկի ներկայացմամբ և հրամանագրվում են ռեկտորի կողմից:
- Կենտրոնի կառուցվածքում այլ փոփոխություններ կարող են տեղի ունենալ անհրաժեշտությունից ելնելով Համալսարանի ռեկտորի հրամանի համաձայն:

4.2. Կենտրոնի ղեկավարը պատասխանատվություն է կրում՝

- Կենտրոնի գործունեության համար, ինչպես ուսումնական, այնպես էլ բուժ սպասարկման բնագավառում:

- Կենտրոնի ղեկավարը հաշվետու է համալսարանի ռեկտորին կենտրոնի գործունեության համար:
- Կենտրոնի ղեկավարը պատասխանատու է Կենտրոնի նյութա-տեխնիկական բազայի լիարժեք և անխափան աշխատանքի, ինչպես նաև գույքային միջոցների պահպանման համար:
- Կենտրոնի գործունեության մեջ ծագած հիմնահարցերը քննարկվում և լուծվում են Համալսարանի ռեկտորատում:
- Կենտրոնի ղեկավարը աշխատակիցներին ներկայացնում է ռեկտորի խրախուսանքին երկարատև անբասիր աշխատանքի համար,
- Այն աշխատակիցը, որը խախտում է ղեկավարության պահանջները, որոնք խոչընդոտում են կենտրոնի աշխատանքների նորմալ ընթացքը, ենթարկվում են պատասխանատվության՝ ընդհուպ աշխատանքից հեռացումը: Հեռացման հարցը լուծում է ռեկտորը կենտրոնի ղեկավարի ներկայացմամբ:

- Սահմանված ժամկետում Համալսարանի ռեկտորին և ՀՀ ԱՆ է ներկայացնում Կենտրոնի գործունեության տարեկան հաշվետվություն,
- Ռեկտորին է ներկայացնում առաջարկություններ Կենտրոնի գործունեությունն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով,
- Կենտրոնի ղեկավարն ունի ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքներ և պարտականություններ:

4.3. Կենտրոնի աշխատակիցները՝

- Կենտրոնի աշխատակիցները իրականացնում են Կենտրոնի գործառույթներից բխող աշխատանքներ,
- կատարում են ռեկտորի և Կենտրոնի ղեկավարի հանձնարարությունները,
- Կենտրոնի աշխատողները պարտավոր են ենթարկվել ՀՀ աշխատանքային օրենսդրությանը, Համալսարանի ներքին կարգապահական և աշխատանքային էթիկայի կանոններին, ինչպես նաև սույն կանոնադրության դրույթներին:

5. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

5.1. Կենտրոնի գործունեությունը ֆինանսավորվում է Համալսարանի կողմից հատկացված միջոցներից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ ձևերով:

5.2. Հասարակությանը տարբեր վճարովի ծառայությունների մատուցման արդյունքում ձևավորված ֆինանսական մուտքերից:

6. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Կենտրոնն ունի Համալսարանի կողմից իրեն ամրագրված գույք:

6.2. Կենտրոնն ունի իր ձևաթուղթը և դրոշմակնիքը:

6.3. Կենտրոնի գործունեությունը կարող է դադարեցվել Գիտական խորհրդի որոշմամբ՝ Համալսարանի կանոնադրությանը համապատասխան ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: